ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 2
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 3
4. ՓՈԽԱՐԺԵՔ 4
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 5
6. ԳՆԱՃ 6
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 7
8. ԱՄՓՈՓՈՒՄ 8

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2020թ. փետրվար ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշը փոքր-ինչ դանդաղել է հունվարի համեմատ՝ արտացոլելով գրեթե բոլոր ցուցանիշների (բացի արդյունաբերությունից) աճերի դանդաղումը:

Հունվար-փետրվար ամիսների տվյալներով տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 8.7%, որը նախորդ ամսվա ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության ցուցանիշին կրկին հիմնական նպաստումն է ունեցել ծառայությունների աճը՝ 4.5 տոկոսային կետով: Սակայն, պետք է նշել, որ բավական բարձր է արդյունաբերության նպաստումը, որը կազմել է 4.2 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության ցուցանիշին դրական են նպաստել նաև առևտրի և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 0.7 և 0.5 տոկոսային կետով: Գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշները չեն հրապարակվել, սակայն, դատելով մյուս ոլորտների աճերից, կարելի է ենթադրել, որ այն շարունակում է անկում գրանցել (տե՛ս Գծապատկեր 2):

Հունվար-փետրվար ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 15.3%, որը միակ ճյուղն է, որտեղ գրանցվել է աճի տեմպի արագացում: Բարձր աճը մեծամասամբ պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի վերականգնմամբ՝ կապված Թեղուտի հանքավայրի շահագործման հետ: Հունվար ամսվա տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր արդյունաբերության աճի 7.3 տոկոսային կետն ապահովվել է հանքարդյունաբերության 38.7 տոկոս աճով, իսկ մշակող արդյունաբերությունը աճել է ընդամենը 7.6%-ով՝ նպաստելով ընդամենը 4.6 տոկոսային կետով: Ստացվում է, որ այդպես էլ չի հաջողվում տնտեսությունում կառուցվածքային փոփոխություններ կատարել և հիմնվել «բարձր տեխնոլոգիական» ոլորտների աճի վրա:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները[1], 2020թ., տոկոսային կետ



Բացի արդյունաբերությունից, մնացած բոլոր ճյուղերի աճերը դանդաղել են փետրվար ամսին, ինչը սպասելի էր, քանի որ հունվարի բարձր աճերը պայմանավորված էին բազային էֆեկտի առկայությամբ:

Այսպես, հունվար-փետրվար ամիսներին շինարարության աճը կազմել է 5.8%՝ հունվարի համեմատ նվազելով 2.2 տոկոսային կետով, իսկ առևտրի աճը կազմել է 6.3%՝ հունվարի համեմատ նվազելով 4.0 տոկոսային կետով: Բացառություն չի կազմել նաև ծառայությունների ոլորտը: Վերջինիս աճը դանդաղել է 0.9 տոկոսային կետով և կազմել 11.2%:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 3. Արտահանման կուտակային աճ, %



[1] Գյուղատնտեսության ցուցանիշը հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

Ինչպես և սպասվում էր, արտահանման աճի տեմպը կտրուկ դանդաղել է փետրվարին՝ կապված ինչպես նախորդ տարվա բազային էֆեկտի հետ, այնպես էլ կորոնավիրուսի պատճառով աշխարհում տիրող իրավիճակի հետ: Ընթացիկ տարվա երկու ամիսների ընթացքում արտահանումն աճել է 8.8%-ով, որը 13.4 տոկոսային կետով ցածր է հունվար ամսվա աճից: Չնայած հանքարդյունաբերության իրական ծավալներն աճել են, էականորեն նվազել է պղնձի միջազգային գինը, ինչը բացասաբար է անդրադարձել արտահանման վրա: Փետրվար ամսվա արտահանումը նախորդ տարվա փետրվարի նկատմամբ ունեցել է 1.3% անկում:

Նմանօրինակ իրավիճակ է նաև ներմուծման դինամիկայում: Հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ներմուծման ծավալները նվազել են 0.8%-ով, իսկ փետրվարի ներմուծումը նախորդ տարվա փետրվարի նկատմամբ նվազել է 3.2%-ով: Այս նվազումը հիմնականում բացատրվում է ավտոմեքենաների ներմուծման կրճատմամբ:

Գծապատկեր 4. Ներմուծման կուտակային աճ, %



3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2020թ. հունվար-փետրվար ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 10.4 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 12.1 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 8.8 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 3.5, 3.6 և 2.3 տոկոս: Աշխատավարձերի աճը մեծամասամբ պայմանավորված է նվազագույն աշխատավարձի աճով, ինչի արդյունքում, մի շարք տնտեսավորողներ ստիպված են եղել բարձրացնել աշխատողների աշխատավարձերը:

Գծապատկեր 5. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., փետրվար, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 6. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)



2020 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 1.7 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Սակայն, մարտ ամսից սկսած, երբ արդեն ՀՀ-ում գրանցվեց կորոնավիրուսի առաջին դեպքը, պատկերը կտրուկ փոխվեց: Վերջին օրերին դրամը շարունակ արժեզրկվում է դոլարի նկատմամբ: Ստորև բերված գծապատկերից կարելի տեսնել, որ արժեզրկման միտումը բավական արագ է և մտահոգիչ:

Գծապատկեր 7. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ անվանական փոխարժեքի օրական դինամիկան



Բնականաբար, ՀՀ կենտրոնական բանկը արդեն սկսել է միջամտել շուկային: Մարտի 16-ին և 17-ին կենտրոնական բանկն իրականացրել է արժույթի ներգրավման սվոփ գործարքներ՝ համապատասխանաբար 32.1 և 20.9 մլն ԱՄՆ դոլարի չափ: Այս գործարքների միջոցով ԿԲ-ն փաստացի 53 մլն դոլար է վաճառել արժութային շուկայում՝ փոխարժեքի կտրուկ արժեզրկում թույլ չտալու համար: Գծապատկերից երևում է, որ մարտի 17-ից հետո փոխարժեքը մի փոքր կայունացել է, սակայն հետո շարունակել է աճել: Փոխարժեքի արժեզրկման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնց շարքում են ինչպես ֆունդամենտալ գործոնները՝ ռուսական ռուբլու արժեզրկումը, մետաղների միջազգային գների նվազումը, այնպես էլ սպեկուլյատիվ գործոնները՝ կապված կորոնավիրուսի արագ տարածման հետ:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

Պետական բյուջեի եկամուտները հունվար-փետրվար ամիսներին աճել են մոտ 19.0%-ով, սակայն փետրվար ամսվա աճը բացասական է: 2020 թվականի հունվար-փետրվար ամիսներին ընդհանուր պետական եկամուտները կազմել են 242.0 մլրդ դրամ, այդ թվում՝ հարկերը և տուրքերը աճել են մոտ 23.1 տոկոսով՝ կազմելով 232.0 մլրդ դրամ: Հարկային եկամուտների բարձր աճը պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների՝ նախորդ տարվա հունվարի համեմատ աճով: Սա ակնհայտ է, քանի որ հունվար-փետրվար ամիսների աճը ստացվում է միայն հունվար ամսվա աճից, իսկ փետրվար ամսվա հարկային եկամուտները նախորդ տարվա փետրվարի համեմատ նվազել են 1.5 տոկոսով:

Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը նույնպես նվազել է փետրվար ամսին: Այսպես, եթե հունվար ամսին ծախսերի 12-ամսյա աճը (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) կազմել էր 34.5%, ապա փետրվար ամսին այն կազմել է 16.2 տոկոս: Աճի տեմպի դանդաղումը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճի տեմպի դանդաղմամբ:

Գծապատկեր 8. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեն նախորդ տարվա նման հավելուրդային է եղել, որը, սակայն, զգալիորեն նվազել է: Քանի որ պետական բյուջեի եկամուտները փետրվարին նվազել են, պետական բյուջեի հավելուրդը նույնպես նվազել է և կազմել 41.7 մլրդ դրամ:

6. ԳՆԱՃ

Գծապատկեր 9. 12-ամսյա գնաճ, %



2020թ. փետրվարին գրանցվել է 0.5% գնանկում: Ինչպես արդեն նշել ենք, 2019թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն երկու անգամ նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 5.5%-ի: Սակայն, սա ոչ միայն բավարար չի եղել, այլև ընդհանրապես արդյունք չի տվել, քանի որ գնաճը շարունակել է մնալ բավական ցածր մակարդակում, իսկ 2020թ. փետրվարին գրանցվել է գնանկում: **Մի շարք այլ ցուցանիշների հետ միասին, գնանկումը ևս վկայում է, որ տնտեսության վիճակը փետրվարին սկսել է վատթարանալ:**

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գծապատկեր 10. Կորոնավիրուսի դեպքերը Հայաստանում



Նոր տեսակի կորոնավիրուսի տարածման կտրուկ արագացումը աշխարհում սկսվել էր դեռևս փետրվարի սկզբներից, սակայն ՀՀ կառավարությունը, ի դեմս առողջապահության նախարարի, պնդում էր, որ համաշխարհային խառնաշփոթ առաջացրած հիվանդությունը սովորական գրիպ է, և բնավ չի սպառնում ՀՀ բնակչությանը: Սակայն, ՀՀ կառավարության մյուս բոլոր կանխատեսումների նման այս մեկն էլ չիրականացավ, և սկսած մարտի կեսերից՝ ՀՀ-ում կտրուկ սկսեցին շատանալ կորոնավիրուսի հայտնաբերման դեպքերը:

Բնականաբար, նման պարագայում առաջնահերթ պլան են մղվում առողջապահական միջոցառումները և ծախսերը: Կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու և հիվանդության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար ՀՀ տարածքում կարելի է ասել «կասեցվել է» տնտեսական գործունեությունը: Նման իրավիճակ է նաև ԵՄ-ում, ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում:

Այսպիսի իրավիճակը բնականաբար կունենա զգալի հետևանքներ ՀՀ տնտեսության վրա: Հայաստանի նման երկրները պետք է առավել ուշադիր լինեն և ճիշտ քաղաքականություն իրականացնեն, քանի որ փոքր տնտեսությունները

ավելի խոցելի են նման ցնցումների հանդեպ, քան զարգացած երկրները: Նմանօրինակ ճգնաժամերի պայմաններում, կառավարությունը պետք է փորձի այնպիսի քաղաքականություն իրականացնել, որ խթանելով տնտեսական ակտիվությունը՝ չվտանգի հարկաբյուջետային և պարտքի կայունությունը: Արդեն պարզ է, որ այս իրավիճակի պատճառով տնտեսական աճը զգալի ցածր է լինելու կամ նույնիսկ բացասական, հետևաբար հարկային եկամուտները նույնպես պակաս են հավաքվելու: Հաշվի առնելով, որ փոխարժեքը կլինի արժեզրկված 2020թ. վերջում, նույնիսկ առանց նոր պետական պարտք ներգրավելու, այս գործոնների հետևանքով տարեվերջին կունենանք բավականին բարձր (60%-ին մոտ) պարտք/ՀՆԱ ցուցանիշ: Եթե սրան գումարենք այն օգնության գումարները, որը կառավարությունը պատրաստվում է տալ տնտեսությանը, ապա պարզ է, որ ունենալու ենք պետական պարտքի անկայուն աճ, որը հանգեցնելու է պարտքի կայունության կորստի:

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **2020թ. փետրվարին, 12-ամսյա աճի գրեթե բոլոր ցուցանիշները (նախորդ տարվա փետրվարի համեմատ) նվազման միտում են ցուցաբերել: Բացառություն է կազմում արդյունաբերությունը, որի աճի տեմպը արագացել է փետրվար ամսին: Սակայն, արդյունաբերության աճի տեմպի արագացումը կապված է հանքարդյունահանման իրական ծավալների աճի հետ: Միևնույն ժամանակ, միջազգային գների նվազման պարագայում, հանքարդյունահանման աճը իր արտացոլումը չի ունեցել արտահանման աճի ցուցանիշում և արդյունքում արտահանման աճի տեմպը կտրուկ դանդաղել է:**

Իհարկե, կառավարությունը 2020թ. ցածր և նույնիսկ բացասական ցուցանիշները «կբարդի» կորոնավիրուսի առաջացրած ճգնաժամի վրա, սակայն այս վերլուծությունը փաստում է, որ փետրվար ամսին արդեն նկատվում են ՀՀ տնտեսական ակտիվության նվազման նախանշանները: Հետևաբար, նույնիսկ առանց կորոնավիրուսի, 2020-ին չէր հաջողվի ապահովել բարձր ցուցանիշներ:

2. **Փոխարժեքի շուկայում իրավիճակը մտահոգիչ է: Մի քանի օրվա ընթացքում ՀՀ դրամի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է՝ 479 դրամից հասնելով 500 դրամի:** Կենտրոնական բանկը, իհարկե, կփորձի միջամտել և կայունացնել այն, սակայն հաշվի առնելով միջազգային և ներքին զարգացումները, դժվար թե ԿԲ-ին հաջողվի կայուն պահել փոխարժեքը:

3. **Կորոնավիրուսի արագ տարածման հետևանքով կլինեն լուրջ տնտեսական կորուստներ: Հարկային եկամուտների նվազումը և միաժամանակ պետական ծախսերի աճը դժվար իրավիճակ կստեղծեն պետական բյուջեի համար՝ մեծացնելով պակասուրդը: Այս գործոնների հետ**

մեկտեղ, տնտեսական աճի կտրուկ նվազումը և փոխարժեքի արժեզրկումը կհանգեցնեն պետական պարտքի կտրուկ աճին: Հետևաբար, կառավարությունը պետք է առավել զգուշավոր լինի տնտեսական խթանման մեխանիզմներ իրականացնելիս՝ հնարավորինս կշռադատելով դրանց դրական և բացասական կողմերը: Խթանման միջոցառումները պետք է լինեն հասցեական, ճիշտ ժամանակին և ժամանակավոր: Եթե չպահպանվեն այս սկզբունքները, պետական ֆինանսների կայունությունը կլինի վտանգի տակ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*